



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.ԶԳ.Ա.ՅԻՆ

ԵՐԵՍՓՈՒԱՆԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՑ ԳԱԹՍՈՒՆԸ ԿԵՑԵՐՐՈՐԴ

31 օգոստոս 1873



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ՄԻԻԿԷՆՏԻՍԵԱՆ

— 1873 —

ՔՆՊՃԱՆՍԻՐ ԽՊՂԱՊՁ

ԲԵՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍ ԿԶ

31 ՕԳՈՍՏՈՍ 1873

ՆԱԽԱԳԱՀ . — ՍՐԲԱՂԱՆ ՊԱՏՐԻԱՐԻՔ (Բացակայ)

ԱՏԵՆԱՊԵՏ . — ՌՈՒՍԻՆԵՍԸ ԷՖԷՆՏԻ (առժամանակեայ կարգեալ)

— 0 —

Ըստ որում ժողովոյն Ա. Ատենապետ Տատեան Յարութիւն էֆէնտի նամակաւ ծանուցած էր որ իր անձնական տկարութեան պատճառաւ այսօր չպիտի կրնայ ներկայ գլտնուիլ, ըստ որում Բ. և Գ. Ատենապետներէն ոչ ոք ներկայ կը գտնուէր, և ըստ որում Ատեան բանալու որոշեալ ժամը շատանց անցած էր, ներկայ երեսօխանաց հրաւիրմամբ Ռուսինեան էֆ. առժամանակեայ կերպիւ գլտնուին գլտնուին անցաւ և ժամը 8 ին ատենը բացաւ 'ի ներկայութեան 27 երեսօխանաց, որոց թիւն 'ի վերջոյ 31 ի յանդեցաւ թէ և, սակայն մեծամասնութիւն չկրցաւ դոյանալ:

Ատենապետ էֆ. կը յայտնէ թէ գլտնուին սեղանին վրայ խնդիր չկայ, այլ երկու նամակ, մէկը Ատենապետ Տատեան էֆ. էն և միւսը Պէտեան էֆ. էն, որք անձնական տկարութեան պատճառաւ բացակայութիւնն ին կը ծանուցանեն, Նոյնպէս խնդրոց կարգալ չկայ. սակայն Ատենապետ էֆ. կըսէ թէ անցեալ նիստին շարունակութիւնն է այսօր, բայց տեղեկարեր Յանձնաժողովոյ անդամներէն ներկայ գտնուող չկայ:

ԱՅՎԱՋԵԱՆ Ա. ԷՖ. — Յանձնաժողովոյ անդամներէն Տ. Ղևոնդ վարդապետը ներկայ է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Միթէ կընդունի՞ տեղեկարերութիւնը:

Տ. Ղևոնդ վ.Ա.Ր. — Յանձնաժողովին կողմէ Օտեան էֆ. տեղեկարեր կարգուած է, և ինք պէտք էր ներկայ ըլլալ:

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒՐԻ Յ. ԷՖ. — Ատենապետ էֆ. կըսէ թէ գլտնուին վրայ խնդիր չգտնէր վիճարանութեան ենթարկելու, ուստի թո՛ղ ներէ ինձ այսօրուան նիստին վերաբերող խնդրոյ մը վրայ հարցում մ'ընել գլտնուին:

Օրագիրը Լրագրոյ մէջ կարդացինք թէ 31 երեսօխանաց կողմէ ստորագրեալ հանրագիր մը մատուցուեր է Տատեան Յարութիւն էֆէնտի, իր Ատենապետի ընդհանուր ժողովոյ խնդրելով որ ժողովրդեան ճնշումէն ազատ մընալու համար այսօրուան նիստը Ղալաթիոյ եկեղեցին գումարի և դռնփակ ըլլայ: Օրագիրը այդ հանրագրին պատճէնն ու ստորագրութիւններն ալ հրատարակած էր: Արդեօք Տատեան էֆ. իւր նամակին մէջ տեղեկութիւն մը կուտայ այդ մասին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ո՛չ, պարզապէս իր անձնական տկարութիւնը ծանուցած է:

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒՐԻ Յ. ԷՖ. — Կուզէի և հարկ իսկ էր որ ուղղակի Ատենապետ Տատեան էֆ. էն տեղեկութիւն առնուր ժողովս և

գիտնար թէ ստուգիւ այդպիսի հանրագիր մը ներկայացած է իրեն և թէ ի՞նչ կարևորութիւն տուած է ինք անոր : Թէ և պաշտօնապէս ժողովոյս շնորհակցութեամբ խնդիր մը մեզի համար անդոյ է , բայց նկատելով որ վիճարանելի խնդիր չունիմք այժմ և այս լուրն ալ մեծ տարածայնութիւն գտած է ժողովըրդեան մէջ , պահ մը կենթադրեմ որ այդ հանրագիրը գոյութիւն ունեցած լինի . . .

ԿՐՃԻԿԵԱՆ Յ . ԷՖ . — (Ընդ միջեւում) Հանրագիրը պարտ էր Ատենագետ ԷՖ . զրկել հոս ժողովին , որպէս զի ՚ի պաշտօնէ տեղեկութիւն ունենայինք :

ՄԷՐԵԷՄ — ԳՈՒԼԻ Յ . ԷՖ . (շարունակելով) — Եւ որովհետեւ հրատարակեալ ստորագրութեանց տէրերէն Քէրէստէճեան և Մարգարեան էֆէնտիները հոս ներկայ կը տեսնեմ , և կը փափաքիմ գիտնալ թէ կուզե՞ն արդեօք իրենց ստորագրած հանրագրին վրայ , եթէ ստուգիւ այդպիսի հանրագրութիւն մը կայ , բացատրութիւն տալ մեզ : Վասն զի հրատարակութեանց նայելով այդ հանրագրին ստորագրող ՅԱ երեսփոխանք որոշեր են այսօր շնորհակցանալ ժողովին եթէ նիստը դռնփակ չըլլայ : Ասիկց դատ մասնաւոր քանքեր կային հատկացնելու համար ժողովողեան թէ այսօր ընդհանուր ժողովը նիստ չպիտի ընէ : Այս պարագայից մէջ կարեոր կը համարիմ և կը խնդրեմ որ յիշեալ երկու մեծապատիւ պաշտօնակիցքս բարեհաճին տեղեկութիւն տալ մեզ այդ հանրագրին վրայ :

ՄԱՐԳԱՐԵԱՆ Յ . ԷՖ . — Պէջիթի մէջ անձանօթ մէկու մը ձեռք ներկայացաւ մեզի այդ հանրագիրը , ուր 20 ստորագրութիւն կար տակաւին , ես ալ ստորագրեցի , ժողովը դռնփակ ըլլալու և Ղալաթիա գումարուէրու համար , որպէս զի երեսփոխանք ազատօրէն իրենց կարծիքը յայտնեն : Բայց ասիկա խնդիր մ'էր որ ժողովէն դուրս ստորագրեցինք , և ըստ որում անոր վրայ ուրիշ հրաւեր մը չեղաւ , արդէն եղած հրաւերը յարդելով այսօր եկայ : Սակայն օրագիրը կտրիպէին որ չգանք միջէ անոնց ստիպելովը կրնայինք չըսել :

ՄԷՐԵԷՄ — ԳՈՒԼԻ Յ . ԷՖ . — Ինչպէս կը հասկընամ , ժողովողական ճնշում : ազատ ըլլա-

լու նպատակաւ դռնփակ նիստի տարջարկութեամբ ստորագրեր է Մարգարեան ԷՖ . բայց յետոյ ինք ալ չհամոզուելով այդ կարծեցեալ ճնշման գոյութեանը , եկեր է այսօր ժողովին : Արդեօք Քէրէստէճեան ԷՖ . ալ ճնշման պատճառաւ ստորագրած է այդ հանրագիրը :

ՔԷՐԷՍՏԷՃԵԱՆ Պ . ԷՖ . — Ճնշման պատճառը խօսքը չեմ ընդունիր . ես միայն դռնփակ նիստ ուղեւում համար ստորագրեցի և կտրիպէի որ այդ առաջարկութեան վրայ նոր հրաւեր մը կըլլայ Սրբազան Պատրիարքին կողմէ . բայց անանկով որ նոր հրաւեր մը չեղաւ , արդէն եղած հրաւերին հնազանդելով եկայ այսօր : Նիստը Ղալաթիա ըլլալու խնդիրն երկրորդական է ինձի համար . միայն դռնփակ ըլլալու մասին համոզուած ու ստորագրած էի . ասկէ առջի նիստն ալ եթէ դռնփակ լինէր , աղէկ էր ըստ իս , որովհետեւ ներկայ խնդիրները փափուկ և կարեոր են . որոնց վրայ ժողովը պէտք է վիճարանի առանց որ և է ակնածութեան : Այսու ամենայնիւ հանրագրին ստորագրողներն որոշում քրած կամ պայման դրած չէին այսօր չգալու համար . ես այդպիսի բան մը չեմ գիտեր :

ՄԱՐԳԱՐԵԱՆ Յ . ԷՖ . — Կը ցաւիմ ըսելու որ ինչքան ջրհանակիրները ճնշում բանեցուցին ըսին , օրագրիներն անոնցմէ աւելի ստիպեցին կամ ճնշեցին հանրագրին ստորագրող երեսփոխաններս՝ որ ժողովի չգանք :

Այս միջոցին Ատենագետ ԷՖ . կը ծանուցանէ թէ հանրագրի մասին 2 օր առաջ թղթակցութիւն մը եղած է Աք . Ատենագետ Տատեան ԷՖ . ի և Ս . Պատրիարքին մէջ , « Ահա ասիկա , կըսէ , Տատեան ԷՖ . ի նամակը , զոր հիմա Ս . Պատրիարքէն ստացանք , և կը կարգայ հետեւեալը . »

Պէշիկթաշ 29 Օգոստոս 1873

Ատենագետի Սրբազան Հայր

Այս առաւօտ յիսուն և մէկ ազգային երեսփոխանաց կողմէն ստորագրեալ հանրագիր մ'ընկալայ որով յիշեալ էֆէնտիները հարկ կը համարին քոր Ընդհանուր ժողովոյն , զալ նիստը Ղալաթիա ըլլայ և և դռնփակ նուստս ալ այս մասին համակարծիք եմ եւ

Վ . Ատենագետ Ստեփան ֓աշան ալ որոյ հետ խորհրդակցեցայ՝ նոյն կարծիքն ունի :

Ուստի կը խնդրեմ Ձեր Սրբազնութեանէն որ բարեհաճի սոյն բազմանաց համեմատ պէտք եղածը անօրինակ տալ տողային լրագրաց միջոցաւ ՚ի գիտութիւն երեսփոխանաց :

Մնամ Ձեր բարձր Սրբազնութեան ամենախոնարհ ծառայ ԾԱՐՈՒԹԻՒՆ Գ . ՏԱՏԵԱՆ Ատենագետ Ընդհանուր ժողովոյ

ԱՏԵՆԱԴՊՈՐ ԵՈՍՈՒՅԵԱՆ ԷՖ . — Տատեան ԷՖ . այսօր բացակայ է . բայց ես երկի զինքը տեսայ և այս մասին լրմէն առած տեղեկութիւնս պէտք է որ ժողովին հաղորդեմ : ՅԱ երեսփոխանաց գրաւոր առաջարկութիւնն ստանալէն ետեւ Տատեան ԷՖ . ալ համակարծիք ըլլալով դռնփակ նիստ ընելու կարևորութեան զրեր է Սրբազան Պատրիարքին պէտք եղած տնօրէնութիւնն ընել : Սակայն Սրբազան Պատրիարքը պատասխան գրելով յայտնէր է որ ասանկ տարածամ առաջարկութեան մը վրայ ինք չկրնար նոր տնօրէնութիւն մը ընել , այլ կը յանձնէ զիւանին իմաստութեանն ու խոհեմութեանն ինչ որ պէտք է տնօրինել : Այս պատասխանին վրայ Ատենագետ ԷՖ . չէ ուզեր ինքնին տնօրէնութիւն մը ընել , և խնդիրը թողեր է ժողովոյն որոշմանը : Ահա այսչափ է զիւանին ունեցած տեղեկութիւնն այս մասին . իսկ Սրբազան Պատրիարքին գրած պատասխանին պատճենն ալ հիմա պիտի գայ Նորին Սրբազնութեանէն , այն ալ կը կարգանք ՚ի տեղեկութիւն ժողովին :

ՄԷՐԵԷՄ — ԳՈՒԼԻ Յ . ԷՖ . — Խիստ լուր ըսել է թէ հանրագիրը գոյութիւն ունի , բայց որովհետեւ չտեսանք զայն կողաչենք զԱտենագետի ԷՖ . որ նախ յայտնէ մեզ թէ՛ Օրագրին մէջ հրատարակուածը Ատենագետ ԷՖ . ին մատուցեալ հանրագրին ճշգրտութենէն է :

ԱՏԵՆԱԴՊՈՐ ԷՖ . — Ձեմ կրնար ըսել թէ ճիշդ է կամ ոչ , վասն զի բնագիրը տեսայ , բայց Օրագրին մէջ կարգացած ըլլալով արդէն , նորէն չը կարգացի :

ՄԷՐԵԷՄ — ԳՈՒԼԻ Յ . ԷՖ . — Ուրեմն չենք կրնար գիտնալ առ այժմ ՚ի պաշտօնէ թէ հանրագրին բուն իմաստն ի՞նչ է , ի՞նչ պատճառաւ նիստը դռնփակ և ՚ի Ղալաթիա կուղեն : Սակայն ենթադրելով թէ Օրագրին մէջ հրատարակուածը հանրագրին ճշգրտութենէն ըլլայ , կրնանք այս տեսութեամբ անոր վրայ խօսիլ :

Իմ կարծեքս չէ թէ ՅԱ երեսփոխան , այլ մէկ քանի երեսփոխան իսկ բաւական են դռնփակ նիստ ուղեւում , երբ օրինաւոր պատճառի մը վրայ յենելով առաջարկէն ժողովին : Սակայն էր ժողովողեան ճնշումն ազատելու վրայ հիմնեն դռնփակ նիստ կազմելու առաջարկութիւնը , ինչպէս այս անգամ ՅԱ երեսփոխանք քրած են , յաւիտեան անընդունելի է իրենց այս առաջարկութիւնը , և անոր դէմ ես յամենայն անձնէ կը բողոքեմ : Այսօր ՅԵՐԳ նիստն է ժողովին , այսին շարունակեալ նիստերու մէջ , ուր բայ ՚ի մէկ քանիչն ժողովուրդը միշտ ունկնդիր զըստուած է , երբէք ճնշում կամ ազդեցութիւն մը ներգործած չէ ժողովին վրայ : Էս որ առաջին նիստին ՚ի վեր երեսփոխանական պաշտօն վարելու պատինն ունեցած եմ և այդ վսթիսուն և վեց նիստերուն զրեթէ ամենուն ներկայ գտնուած եմ , չեմ յիշեր այնպիսի օր մը՝ յորում ժողովողին ազդեցութեան տակ խօսած լինիմ , չեմ յիշեր վայրկեան մը՝ յորում ճնշման ներքե մնացած և կարծիքս զո՛ւրու պարտաւորած լինիմ : Եւ ո՞րն է այն երեսփոխանն որ կարծեայ իւր խղճովն ըսել թէ՛ ժողովուրդն երբէք զինքը ճնշման ներքե դրբաւ : Ժողովուրդն իւր երեսփոխանաց ազատութիւնը միշտ յարգած է և պաշտպանած : Մանաւանդ նախընթաց նիստին ամենքս ալ տեսանք որ ժողովուրդը կատարեալ խաղաղասիրական ողւով եկած էր ՚ի մտայ գիտելու թէ Պատրիարքական հրատարականի մեծ խնդիրն ինչ կերպով լուծուի պիտի ստանար երեսփոխանական ժողովին : Ժողովողեան բազմութիւնը յուզում և խռովութիւն յարուցանել ուղղորդեց հանգարտեցնելու մտազիր էր աւելի , քան թէ երեսփոխանաց գործին միջամտելու և անոնց կարծեաց վրայ ճնշում բանեցնելու : Ուրեմն ինչո՞ւ այս ձրի զրպարտութիւնը ժողովողեան վրայ . ի՞նչ նը-

պատակ կայ ժողովուրդն այսպէս շարաչար նախատեսլու մէջ իւր երկսփոխաններուն ձեռքով . ինչ պատճառ կայ ծանրակշիռ հեւեանաց տեղի տալու այս անխոհեմ ընթացքով : Ես ամենայն դորու թեամբ կը հերքեմ այդ երեւակայական ճնշման պատճառը , և կը կրկնեմ որ երբ օրինակ որ պատճառ մը մէջ բերեն , այն ատեն կարելի կըլլայ հաւանիլ դռնփակ նիստ ընելու , որչափ ալ Քիչ ըլլայ առաջարկողներուն թիւը :

Այս պահուս դիւանը միջանկեալ կերպով կը կարգայ Սրբազան Պատրիարք Հօր վերոյիշեալ պատասխանագրոյն պատճէնը , որ ահաւասիկ .

Վսեմաշուք Ատենապետ Երեսփոխանական ժողովոյ

Յիսուսն եւ մէկ երեսփոխանաց առ ձեզ ուղղեալ հանրագրութեան վրայ յենելով տարածամ եւ ստիպաւ կ'առաջարկէք մեզ , յետս կոչել մեր նախորդ հրաւերը եւ նոր հրաւեր կարգալ Երեսփոխանաց , յաջորդ նիստ ՚ի Ղալաթիա դումարիլ եւ դռնփակ նիստ կազմել :

Ինձ համար ամէն նիստ , ուր որ լինի ինչ կերպիւր որ լինի միշտ հաճոյական եւ միեւնոյն նշանակութիւն ունի , բայց որովհետեւ նախորդ նիստն Մայր եկեղեցին գումարուած էր , այս անգամ եւս նոյն եղանակաւ հրաւեր ուղղուեցաւ Երեսփոխանաց մեր ստորագրութեամբ :

Արդ , առանց ընդհանուր ժողովոյ գումարման եւ նորոգ որոշման , որպէսզի մեր ձեռքով մեր ստորագրութեան յարգ չ'ազարտի եւ մեկնութեանց առիթ չտրուի , Պատկառելի դիւանիդ խոհեմութեան եւ իմատուութեան կը թողում տնօրինել ինչ որ օրէն է եւ արժան :

1873 Օգոստոս 29 Իրիմեան Հայրիկ

ԻԽԹԻՆՃԵԱՆ Կ. ԷՖ. — Իմ ըսելիքներուս մեծ մասն արդէն Մէրեշի—Պուլի էֆ . խօսեցու և խիստ լաւ բացատրեց . ես ալ իրեն հետ համակարծիք ըլլալով , սա միայն պիտի յաւելցնեմ թէ ժողովուրդն՝ որ այսչափ ժամանակ մեր նիստերուն ներկայ գտնուած է , երբէք ճնշում կամ որ և է ազդեցութիւն մը

բանեցուցած է՝ Երեսփոխանաց դէմ . մանաւանդ վերջի նիստին մէջ բնաւին միջամտութիւն մը չէ ըրած . զայդ ըսողներն ամենէն շատ խօսեցան և ոչ ոք ժողովրդէն իրենց բան մը ըսաւ : Երբնչև անգամ նոյն իսկ Պէկեան էֆ . երբ արհասարակո—լի—ն բառը բերնէն հանեց Սրբազան Պատրիարքին նկատմամբ , թէ և Երեսփոխանաց ոմանց կողմէ բողոքներ եղան իրեն դէմ և Ատենապետ էֆ . ՚ի լուրեթիւն հրաւիրեց զինքը , բայց ժողովրդէն բնաւ ձայն հանող չեղաւ . հիմա ելլել ժողովրդին դէմ ասանկ խօսքեր հանելը բողոքովին դրպարուութիւն է . ժողովրդին ընթացքը չնորհակալութեան արժանի է և ոչ թէ դանդատանաց կամ պարտաւանաց : Ես կը խնդրեմ որ իմ այս յայտարարութիւնս արձանագրուի :

ԻՔԷԿՃԵԱՆ Զ. ԷՖ. — Ինչ որ ինչ առաջ իմ երկու պաշտօնակիցներս խօսեցան շատ իրաւացի կը գտնեմ : ՚ի հարկէ 2 կամ 3 երեսփոխան ալ կրնան իրաւունք ունենալ ժողովին նիստը դռնփակ ընելու և Ղալաթիա դումարիւրու առաջարկութիւն ընել . բայց երբ ՅԱ երեսփոխանը իրենց առաջարկութեան մէջ յայտարարութիւն կընեն թէ՛ ժողովը Ղալաթիա և դռնփակ կուզեն , ըսել կուզեն թէ իրբն թէ իրենք չեն կարողացած ազատօրէն կարծիք յայտնել վերջին ժողովին մէջ : Եստ լաւ . սակայն ըսկիցքէն մինչև հիմա և ոչ մէկ անգամ մը ժողովուրդը ճնշում բանեցուցած է ժողովոյս վերայ . այս կէտն իմ երկու պաշտօնակիցներս արդէն այնպէս լաւ բացատրեցին և հաստատեցին որ , աւելորդ կը համարիմ ես ալ իմ կողմէս վկայել : Միայն սա կըսեմ թէ ճնշումը հրատարակաւ դժուար է բանեցնել այս խոզովին մէջ . իսկ ժողովէն դուրս՝ շուկային մէկ ծայրէն մինչև միւս ծայրը հանրագիր պիտեցընելով , ստորագրութիւն ժողովելով , սա ուսն խարեւով և ստութիւններ ընելով ճնշում բանեցնելուն հազար ու մէկ տեսակը կրնայ ՚ի գործ դրուիլ . ճնշումներ , զորս մի առ մի թուել չեմ ուզեր : Ճնշումը՝ նոյն իսկ խոզովէն դուրս այդպիսի կերպիւր ստորագրութիւններ հաւաքելն է . եթէ առաջարկութիւն մը ունէին , պարտաւոր էին օրինակ եղանակաւ ժողովին հաղորդել և օրինակ որ կերպիւր որոշել սալ . չէ թէ այսպէս պառակտում

հանել ժողովին մէջ : Ես իրաւունք կունենամ ամբաստանել զանոնք՝ որ այսօր ժողովը պառակտելու պատճառ եղան , շատ մը բարեմիտ երեսփոխաններ իրենց ետէն բաշելով և յանկուցանելով բաժանում ձգեցին ժողովին մէջ . անշուշտ այս ասօրինի և ազդամլաս ընթացքին դատաստանը ազագայն պիտի տեսնէ : Այդ առաջարկութիւնն ստորագրող երեսփոխաններն երկուքը հոս ներկայ են , պահ մը առաջ իրենց տուած բացատրութենէն այնպէս կը հասկընամ թէ իրենք առաջարկութիւնը խոզովին ներկայանալու մտքը ստորագրութիւն գրած են հանրագիրին մէջ . եթէ գիտնային թէ այսպէս պառակտում պիտի ըլլայ ժողովին մէջ , անշուշտ չպիտի ստորագրէին :

ՄՍԸԳԱՐԵԱՆ Յ. ԷՖ. — (Ընդմիջելով) Էթէ ես գիտնայի որ Սրագրոյ մէջ պիտի հրատարակուէր այն հանրագիրը , ամենեւին չէի ստորագրէր :

ԻՔԷԿՃԵԱՆ Զ. ԷՖ. (չարունակելով) — Սրագրին այսօրուան ըրած յայտարարութեան հասկըցանք որ այսօր մեծագոյն մաս չը պիտի ունենանք . կը մնայ յաջորդ նիստին որ այդ առաջարկութիւնն ընող երեսփոխանք ներկայանան , և խնդրոյն վրայ ժողովն օրինաւորապէս որոշում մը ասց . եթէ այսպէս չընեն , զատապարտելի է իրենց բռնած ընթացքը : Ես կը ցաւիմ որ Ատենապետ էֆ . ալ համակարծիք գտնուէր է այդ առաջարկութիւնն ընող երեսփոխանաց , ես չեմ ուզեր ըսել թէ իրաւունք չունի համակարծիք գրտնուելու . կրնայ համակարծիք ըլլալ , սակայն պարտաւոր էր զեկուցանել առաջարկողներուն որ օրինաւորութեան ճամբու մէջ գնելու համար պէտք է խնդիրը ժողովին բերեն և գործադրելէ առաջ ժողովին կամքն ու որոշումն առնեն : Չգիտեմք տակաւին թէ արդեօք դիտողութիւն մը ըրած է այս մասին : Կարծեմ որ խնդիրը դարձեալ օրինաւորութեան սահմանին մէջ գնելու համար Սրբազան Պատրիարքը ժողովին նոր հրաւեր մ'ալ ընելէ առաջ Ատենապետ էֆ . ին հետ բանակցելով եղած ասօրինաւորութեան վրայ իւր ուղարկութիւնը հրաւիրելու է , որպէսզի փութայ ՅԱ երեսփոխանաց պարագլուխները համոզելու

և հասկցնելու թէ իրենց բռնած անպատեհ ընթացքը ինչ ազդամլաս հետեանք կրնայ ունենալ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. (Ընդմիջելով) — Քանի որ բուն Ատենապետ էֆ . ինքնին ներկայ չէ այսօր , անոր դէմ ուլտք չէ ակնարկութիւններ ընել , իսկ երբ ինքը ներկայ ըլլայ կրնաք բացատրութիւններ ուղել իրմէն :

ԻՔԷԿՃԵԱՆ Զ. ԷՖ. (չարունակելով) — Իմ ըրած դիտողութիւններս Ատենապետ էֆ . ին նկատմամբ ենթադրական են . փախաբէլի էր որ այսօր անձամբ հոս գտնուէր ու լսէր . բայց որովհետեւ կարծանագրութիւն եղած խօսքերը , հարկաւ պիտի կարգայ ու իմանայ , և պէտք եղած բացատրութիւնը պիտի տայ ուրիշ նիստի մը մէջ : Գալով իմ խօսքերուս եզրակացութեանը , հոս պիտի անհիտիեմ թէ՛ որչափ որ ներկայ նիստն որոշում մը ընելու ձեռնհասութեան մէջ չգտնուիր , այսու ամենայնիւ կըրնանք առաջարկել Սրբազան Պատրիարքին որ դիւանին հետ խորհրդակցութեամբ առաջիկայ ուրբաթ օրուան համար նորէն ժողովը հրաւիրէ , և ՅԱ երեսփոխանաց ալ առաջադրէ որ իրենց խնդիրն օրինաւորապէս յաջորդ նիստին ներկայացնեն . եթէ դարձեալ չզան , իրաւունք կուսնանք բողոքել և ամբաստանել զիրենք թէ այսօրինակ որ միջոցներու կը դիմեն և ժողովին պառակտուելուն առիթ կուտան : Մեք ալ շատերուն հետ համակարծիք էինք , ժողովոյ Մայր Եկեղեցւոյ մէջ գումարուելուն , թէ՛ մեր և թէ՛ ժողովրդեան հանգըտութեանը համար . զի Ղալաթիոյ եկեղեցին շատ նեղ կուգար երբ հազարաւոր ժողովուրդ հոն կը ընցուէին , թէ՛ ես և թէ՛ ուրիշ երեսփոխանք երկար նեղութիւններէ ետք հազիւ կարողացանք ներս մտնել : Հիմա իրենք նորէն Ղալաթիա ըլլայ կըսեն . շատ լաւ . մեք ընդդիմութիւն մը ընելու գիտում չունինք , միայն թէ թող իրենց առաջարկութիւնն օրինաւորութեամբ բերեն ժողովոյ յաջորդ նիստին , որպէսզի ժողովն իր օրինական քուէովն որոշէ նիստը դռնփակ կամ Ղալաթիա ընելը և ըստ այնմ ամեն երեսփոխան օրինաւորութեան ձայնին հնազանդի :

Տ. ՂԵԽՈՒԿ Վ. ՓԻՐԱՆԷԿԵԱՆ. — Յի երեսփոխան լրագրաց միջոցու յայտարարու-

թիւն ըրած են թէ իրենք ժողովոյ նիստը դռնփակ ըլլալ կուզեն . այս ընթացքն ապօրինաւոր ըլլալուն համար կը բողոքեմ ասոր դէմ . իրենք իրաւունք ունէին և կրնային ժողովին մէջ ընել այդ առաջարկութիւնը , և մեծագոյն մասին ընդունել տալ : այն ատեն փոքրագոյն մասին խօսք չէր մնար :

ՄԵՐԵԿԵՄ—ԳՈՒԼԻ Յ . ԷՅ . (Ընդմիջելով) — Դարձեալ իրենց մէջ բերած պատճառը պարտաւոր էին փոխել և օրինաւոր պատճառաբանութեամբ բերել իրենց առաջարկութիւնը ժողովին :

S . ՂԵՒՈՆԻ Վ . ՓԻՐՂԱԼ . (շարունակելով) — Այսու ամենայնիւ գործնական նիստ ընելու առաջարկութեանն ալ ես դէմ եմ բոլորովին , այդ առաջարկութեան մասնաւոր հեղինակները խել մը բարեմիտ երեսփոխաններ ալ որ և է կերպիւ համոզած և ստորագրել տուած են իրենց շինած հանրագիրը : Գործնական ընելու շարժառիթը ժողովին գործոց գաղտնապահութիւնը չկրնար ըլլալ , և գաղտնի պահելու գործ մ'ալ չունինք , զի մեր ազգը քաղաքական անկախութիւն չունի . մանաւանդ որ մեր ժողովին ատենագրութիւնները կը հրատարակուին և ամեն ազգ կրնայ կարգալ գանոնք : Կրտսէն թէ ժողովուրդը ճշտում կը բանեցնէ և այսու կը վիրաւորեն ժողովուրդին զգացումները . այս յայտարարութեան դէմ նոյն իսկ ժողովրդեան կողմէ կը բողոքեմ : Կը բողոքեմ նաև այն անհամարժէք , չոր ժողովուրդը լոյս-մարտի անուամբ կը մկրտեն . այս ջերմեանդ անձինքն երբ ուրիշ պարագաներու մէջ ոզի 'ի բուն աշխատին Ազգին համար , գովեստ կընդունին և ազգասէր կը կոչուին . իսկ երբ ասանկ խնդիր մը ծագի լոյս-մարտի անունը կուտան և կը պարտաւեն : Դարձեալ գործնական նիստ ուղղալ այս երեսփոխաններին ոմանք էին որ անցեալ տարի բողոքած են « մեզի դռնփակ նիստ պէտք չէ » ըսելով , հիմա ասոր հակառակը կը պնդեն , և այս ալ ոչ թէ օրինաւորութեամբ խնդիրը ժողովին բերելով և որոշում ընել տալով , այլ հրատարակաւ և լրագրաց մէջ յայտարարութեամբ կը պահանջեն , որ օրինաւորութեան պայմանէն դուրս է , որոյ դէմ ամենայն զօրութեամբ կը բողոքեմ , և կը հերքեմ դռ-

նփակ նիստի առաջարկութիւնը : Կուզեմ որ այս իմ բողոքներս արձանագրուին :

ՄԱԶԻՆՄԵԱՆ Յ . ԷՅ . — Շատ ծանր խնդիրներ կրնան պատահիլ , և խնդրոյն կարեորութեանը համեմատ դռնփակ կամ հրատարակաւ նիստեր կրնայ ունենալ ժողովը : Արդարև վերջին մէկ երկու ամսուանս մէջ ժողովն ունեցաւ այնպիսի խնդիրներ , որոնց ծանրութիւնը ամենքս ալ գիտենք և կը խոստովանինք : Բայց քանի մը Երեսփոխանք կառարկեն թէ ժողովուրդը կը ճշտէ գիրենք , և այս պատճառաւ դռնփակ նիստ ընել կառաջարկեն : Ճշտումն երկու տեսակ է , բարոյական և նիւթական . յայտնի է թէ ճշտուեցանք ըսողները մ'այն նիւթական ճշտումը կուզեն հասկնալ և անկէ միտոյն կը վստանան . իսկ բարոյականէն չեն ստարք : Կը ցույս իմ որ այդ Երեսփոխաններն իրենց խնդիրն առջև պատասխանատու կը մնան երբ կրտսէն թէ ժողովուրդը ճշտեց զմեզ , մինչդեռ իրենք կատարեալ ազատութեամբ և մինչև ժամը 11 խօսեցան վերջին նիստին մէջ : Նոյն իսկ Պէկեան էջ . որ ճշտուեցանք ըսողներուն առաջինն ու հեղինակն է , քանի մը անգամ իմ խօսքս ընդմիջեց և ուզեց արդեւ ըլլալ խօսելուս . բայց ես ներքեցի իրեն և պիտի ներեմ յաւիտեան . զի ինքն այն միջոցին խիստ յուզեալ էր և չէր կրնար ուղածիւն պէս բացատրել իր միտքը . երբ տեսաւ որ իր կարծեացն ու ակնկալութեան հակառակ որոշում տալու կը միտէր ժողովը , ելաւ թէ ճշտում էրաւ , և քաջաբախու շքաւոր խնդրեց : Ես ալ այն միջոցին բողոքեցի իրեն գործածած ճշտում բառին դէմ : Կը յուսամ որ թէ ' նորա հրատարականը և թէ ' իմ բողոքս արձանագրուած պիտի տեսնենք նոյն նստին ատենագրութեան մէջ , երբ տըպագրութենէն 'ի լոյս ելնէ :

ՄԵՐԵԿԵՄ—ԳՈՒԼԻ Յ . ԷՅ . (Ընդմիջելով) Ատենագրւոյ էջ . կաղտնչեմ . ըսէք մեզ , արձանագրուած են ասոնք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ . — Անտարակոյս ամենայն ճշտութեամբ :

ՄԱԶԻՆՄԵԱՆ Յ . ԷՅ . — (Շարունակելով) Խնդրոյ նիւթ եղած երեսփոխանական հանրագրին ստորագրութիւնները՝ գոր 31 գի-

տէ ինք , 39 ի ելած են ըստ յայտարարութեան Օրոգոյ . այս 39 երեսփոխաններն ո՞ գիտէ ինչ բարոյական ազդեցութեամբ կամ ճշտմամբ և ինչպիսի սարսաղայներու տակ և զուցէ մեծ մասն ալ առանց խորհելու կամ ստուգելու ժամանակ ունենալու անմիջապէս ստորագրած են : Այսօր եթէ մեք չհամակերպինք անոնց , չեմ յուսար որ կարենանք այսուհետև մեծադոյն մաս զտնալ ժողովին մէջ : Քանի որ Սրբազան Պատրիարքն ըսեր է Ատենագրեալ էջ . ին թէ ես չեմ կրնար առանց ժողովին որոշման նոր տնօրէնութիւն մը ընել և յանձնել է գործը դիւանին , քանի որ դիւանն ալ ինքնին տնօրէնութիւն մը չէ կրցեր ընել և թողեր է գործը ժողովին , գոնէ մեք այսօր 39 երեսփոխանաց առաջարկութիւնը նկատողութեան առնելով դռնփակ նիստ ընել որոշէինք ազգի կըլլար : Սակայն նկատելով որ այս ալ չպիտի կրնանք ընել քանի որ որոշում ընելու ձեռնհաս թիւ չունինք , ինչ կը մնայ մեզ ընել . ես կըսեմ թէ մեք չը պնդենք դռնփակ նիստ ընելու առաջարկութեան դէմ , թողունք Ս . Պատրիարքին ու դիւանին որ իրենց մէջ համաձայնին և դռնփակ կամ դռնբաց ընելու խնդիրն իրենք լուծելով յառաջիկայ շարթուն նորէն ժողովը հրաւիրեն : Եւ որովհետև մեր կարծիքը լիովին արտայայտել կարող ըլլալու համար վերջին երկու նիստերու ատենագրութեանց պէտք ունինք , կը խնդրեմ դիւանէն որ խնամք տանի անոնց տպագրութիւնը մինչև յառաջիկայ նիստ հասցնել և հաղորդել երեսփոխանաց . նոյնպէս Երեսփոխանական Քննիչ Յանձնաժողովոյ տեղեկագիրն ալ : Իսկ ես դառնալով նորէն նախորդ նիստին մէջ եղած որոշման սարսաղաներուն , որոգ վրայ այլ ընդ այլոյ տարաձայնութիւնք տարածուած են , իբր թէ դիւանը գոց և թափուր դռնուած միջոցին որոշում եղած է , և մինչև իսկ քուէարկութիւն եղած ըլլալը կուրանան , մինչդեռ մեք ամենս ալ գիտենք որ յեա վիճարանութեան օրինաւոր կերպիւ քուէարկութիւն ալ եղաւ և ժողովին որոշումը Սրբազան Պատրիարքին հազորուելէն ետև Նորին Սրբազնութեան պատասխանը դարձեալ ժողովին բերուեցաւ երբ ժողովը տակաւին դոցուած չէր , այս տարաձայնութեանց առջևն առնելու համար պէտք

է դիւանին յանձնել , կըսեմ , որ պաշտօնական յայտարարութեամբ մը և շեղութեան ճշգրիտ վիճակը հրատարակէ : Մեր Ազգային իշխանութիւնը բարոյական է , երբ բարոյական ազդեցութիւնն իս ճշտան տակ կը գրտնուի , և այս ալ պաշտօնական անձանց ձեռք , մեր ոյժը կը տկարանայ , մեր իշխանութիւնը դողրած կը համարուի և ասոր հետևանքն Ազգին փաստակար կըլլայ : Այսպիսի յարձակմանց և անուանարկութեանց , որ պաշտօնական անձանց ձեռք 'ի գործ կը դըրուին , առջևն առնելու համար ալ տնօրէնութիւն մը պէտք է , կըսեմ , և այս ալ դիւանին ուշադրութեան յանձնելն աւելորդ չեմ համարիր , որպէս զի Ազգային Վարչութիւն ըսուած մարմինը , որ զնդհանուր ժողովը կը ներկայացնէ , ինչպէս Ընդհանուր ժողովն ալ զԱզգը կը ներկայացնէ , շտկարանայ և ուժէ չիցնայ , 'ի մեծ վիշտ ընդհանուր Ազգին : Թէև այս ըսածս առաջարկութիւն մը չէ , բայց կրնայ առաջարկութեան կերպարանք առնուլ թէ որ կարեորութիւն տրուի : Իսկ բուն խնդրոյն վրայ առաջարկութիւնս 'ինչպէս արդէն ըսի , դարձեալ կը կրկնեմ . քանի որ Սրբազան Պատրիարքը կըսէ թէ չը կրնար առանց ժողովին որոշման դռնփակ ընելու չ'ընելու մասին նոր տնօրէնութիւն մը ընել , և քանի որ ժողովէն դուրս խել մը Երեսփոխաններ ստորագրութիւն հաւաքելով դռնփակ ըլլայ կըսեն և չեն ուզեր առաջարկութիւններն Ընդհանուր ժողովոյ մէջ բերել . ըսել է թէ երկու հակառակ կողմ եղած ենք և եթէ այսպէս շարունակուի չպիտի կրնանք օրինաւոր ատեն կազմել . ուստի յանձնենք դիւանին որ Ս . Պատրիարք Հօր հետ խորհրդակցելով դռնփակ նիստ ընելու չընելու խնդիրն ինքնին որոշեն նկատողութեան առնելով վիճարանելի խնդրոյն կարեորութիւնը , առանց միւս կողմին բողոքոյն , այն է ժողովրդին ճշտման ներքև չգործելու համար մէջ բերուած պատճառաբանութեան կարևորութիւն տալու , և իրենց իմաստութեամբն ու խոհեմութեամբը պէտք եղածը տնօրինեն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ . — Մաղլմեան էջ . պարտք մը ձգել ուզեց դիւանին վրայ , այն է նախորդ նիստին մէջ եղած գործոց և որոշմանց ճշգրտ-

տուժիւնն 'ի պաշտօնէ հրատարակել կը պատասխանեմ թէ դիւանն այդ պարտքը կատարած կըլայ երբ ժողովին ատենագրութիւնն 'ի լոյս ելնէ :

ԿՐՃԻԿԵԱՆ Յ. ԷՑ. — Ասկէ առաջ ժողովն ինչպէս կը յիշէք, ունեցաւ դռնփակ նիստեր Աղթամարայ կաթնուղիկոսութեան խնդրոյն առթիւ. բայց ժողովն ինք որոշած էր նոյն մէկ քանի նիստերը դռնփակ ընել, Հիմա ալ ՅԱ Երեսփոխանք, որք դռնփակ նիստ ընել կը պահանջեն, կրնային և պարտաւոր իսկ էին նախորդ նիստին մէջ այդ առաջարկութիւնը ժողովին ներկայացնել, և չէ թէ ժողովն զուրսն ազդեցութիւն բանեցնելով ժողովը պառակտման մէջ ձգել, որուն հետևանքն այս եղաւ, որ ժողովը չկրցաւ այսօր մեծամասնութիւն ունենալ և ներկայ եղողներն ալ պարապ տեղն եկածի պէս եղան : Ուստի կառավարիւմ որ Արքայան Պատրիարքն իւր նախորդ հրահրէր կրկնէ չէ թէ դռնփակ նիստ ընելու, այլ բոլոր Երեսփոխանները հրաւիրէ որ դռնփակ ընելը կամ չընեն որոշեն : Եթէ օրէնք մը ունին որ կը արամագրէ թէ քանի մը Երեսփոխան միանալով կրնան առաջարկութիւն ընել և այն ալ ժողովին մէջ և չէ թէ ժողովն դուրս, դարձեալ այդ առաջարկութիւնը չկրնար որոշման կերպարանք առնուլ, այլ պէտք է իրականանայ ժողովին մէջ որոշում գտնելով : Ուստի կը կրկնեմ թէ պէտք է Արքայան Պատրիարքն իր հրահրէր երկրորդէ բոլոր Երեսփոխանաց սոյն խնդրոյն լուծմանը համար :

ՄԱՋԻՆԵԱՆ Յ. ԷՑ. — Քանի որ անհամաձայնութիւն կայ այս մասին, հրահրէր կըրկնուելով ալ դարձեալ չպիտի ներկայանան դռնփակ ուղղողները, և անգործութեան պիտի դատապարտուի ժողովը :

ԿՐՃԻԿԵԱՆ Յ. ԷՑ. — (Պատասխանելով) Խնդրոյ մը վրայ առանց ժողովին մէջ յուզուելու որոշում չկրնար ըլլալ. չէ թէ ՅԱ Երեսփոխան, այլ եթէ Երեսփոխանաց ամենն ալ դուրսը միանան և որոշում մը ընեն, ապօրինաւոր է և չընդունուիր. օրինաւոր ըլլալու համար պէտք է պաշտօնական կերպով նիստը դուրսի և ժողովին մէջ որոշուի :

ԻՌՅԻԿԱՆ Կ. ԷՑ. — Արքայան Պատրիարք չոր հրահրագրին մէջ դռնփակի կամ դռնբացի խօսք չկար, միայն ըստ նախորդ նիստին Մայր եկեղեցւոյ մէջ պիտի ըլլայ ըսած էր : Քանի որ առանկ պայման մը չկար, ըսել է թէ ժողովը կրնար եթէ ուղէր դռնփակ ալ ընել. հերքէր որ դռնփակ ընելու զոր ուսն օրինաւորութեամբ դար և ատենանք բացուելէ առաջ առաջարկէր կրկնուին, և ուղղութեան առնուելով որոշուէր դռնփակ ըլլալը . այն ատեն ժողովուրդը թէ և լեցուած ալ ըլլար խորհրդարանին մէջ, երբ Արքայան Պատրիարքը յայտարարէր թէ դռնփակ պիտի ըլլայ, կրնայ արդեօք մէկը հատտաւ որ ժողովուրդն իսկոյն չպիտի հնազանդէր : Փոխանակ այս բնական ճամբուն հետևելու ելնել անբնական ճամբով պահանջումներ ընել և ժողովն անգործութեան դատապարտելն ուրիշ բան չընշանակէր, այլ ինչպէս Մաղղութեան էՖ. ըսաւ, ժողովը բարոյական ճշման ներքեւ դնել, որ նիւթականէն աւելի ծանր, միասակար և խիստ ցաւալի է : Ուստի ես ալ կառավարիւմ ըստ Մաղղութեան էՖ. ի, որ Արքայան Պատրիարքը դիւանին հետ խորհրդակցութեամբ առաջիկայ ուրբաթ առաջ համար ժողովոյն նիստը ուր և ինչ եղանակաւ գումարին իրենց մէջ որոշեն և զԵրեսփոխաններն հրահրեն. իսկ թէ որ մէջ բերուած ժողովրդական ճշման պատճառաբանութիւնը վերցնելը չընդունին, դարձեալ այն Երեսփոխանք՝ որ այսօր եկած են, կրնան գումարիլ, և Յ անգամ իրարու վրայ գումարելէ ետև ներկայ չդռնուող Երեսփոխանները հրաժարեալ կը համարուին, այն որոշման համաձայն զոր արդէն ժողովն ընդունած և հաստատած է Յ անգամ յաջորդական բացակայութեանց համար, և անոնց տեղ նոր, ընտրութիւն կը լինի : Արքայան պահանջեմ թէ խնդիր մը ժողովն դուրս և առանց ժողովին մէջ թուի դրուելու չկրնար որոշում գտնուլ. անոնք որ օրինաց այս տրամագրութիւնը չեն յարգեր և ապօրինապէս կը վարուին, և չեն սեպեր գալ ժողովին, Յ նիստերու յաջորդաբար բացակայ գանուելէ ետև օրինապէս պէտք է հրաժարեալ համարուին : Այս է կարծեմ ներկայ գծաւորութեան միակ դարմանը :

Յ. ՅՈՒՂԱՆՆԷՍ ՔԷՆՅ. ՄԿՐԵԱՆ. — Ըսուեցաւ թէ Ընդհանուր ժողովը պառակտեցին՝ ազգային ժողով մը պառակտելն Ազգն 'ի ծուէնս պատառել ըսել է, որով ազգային գործերն առ խարխափ կընթանան : Արդարեւ կը տեսնեմ որ ժողովը պառակտած է. կը տեսնեմ նաև որ հոս ներկայ եղող և ստորագրող Երեսփոխաններն կը ցաւին այս պառակտման վրայ և կիրք չունին . այսինքն չեն պնդեր որ անպատճառ ժողովին նիստը դռնփակ չըլլայ կամ թէ Ղալաթի չ'գումարի . ասով կը հասկընամ թէ իրենց կիրքը միայն Ազգին բարեքնէ, և ուրիշ նկատում մը չունին : Արդէն Ընդհանուր ժողովը Մայր եկեղեցին գումարելուն մէջ նպատակ մը չկար, ասոր պատճառն ուրիշ բան չէր, այլ թէ ժողովն աւելի հոս հանգիստ կրնար ընել քան թէ Ղալաթիա, նոյնպէս ժողովրդին ներկայութեան համար հոս ամենէն աւելի յարմար էր. զի այս եկեղեցին ընդարձակ է և Պօլսոյ եկեղեցեաց մէջ ամենէն մեծը . ուստի կառավարիւմ որ ժողովին գումարման տեղույն վրայ դիտողութիւն չըլլայ և խնդիր չը յարուցուի. միայն դռնփակի խնդրոյն վրայ Արքայան Պատրիարքը դիւանին Անդամոցը հետ խորհրդակցելով պէտք եղած տնօրէնութիւնն ընէ, եթէ դռնփակ նիստ ընելու պէտք կայ՝ որոշումը ժողովին մէջ ըլլալու պայմանաւ : Դռնբաց ըլլալու որոշում կայ արդէն, դռնփակ ըլլալու որոշումն ալ ժողովով պէտք է տրուի. իսկ գումարման տեղին հոս կամ հոն ըլլալու վրայ, խօսք չըլլայ բնաւ . որպէս զի խաղաղասիրութեան օրինակ տուած ըլլամք, և ժողովն իրօք պառակտելու պատճառ չ'գտնուիմք, եւ մասնաւոր դիտում մը չունենանալիս ասով տը յայտնեմք : Այս է իմ առաջարկութիւնս :

ԱՂԱԲԷԳԵԱՆ Մ. ԷՑ. — Կը ցանկայի իմանալ նախ թէ ՅԳ Երեսփոխանաց արարքն՝ այն է արտաքոյ ժողովոյն դռնփակ նիստ պահանջելը Սահմանագրութեան համաձայն է . որովհետև այդ անձինքը Սահմանագրութեան կէտ առ կէտ գործագրութիւնը պահանջողներն են. արդեօք առանձին խումբ կազմելով ժողովն դուրս այս տեսակ առաջարկութիւն մը ընելու արտօնութիւնը Սահմանագրութեան ո՞ր յօդուածէն կ'առնուն, եթէ չունին ասանկ արտօնութիւն մը Սահմանագրութեան իրենց տուեալըստ իմ կարծեաց ասոնք ինքնին զրկեալ կ'համարուին իրենց Երեսփոխանական իրաւունքէն Սահմանագրութեան հակառակ գործելով : Իսկ թէ որ Սահմանագրութեանն արտօնութիւն առնելով այդպէս կը վարուին, ես կը տեսնեմ թէ այդ օրէնքը ազգակործան է, որ ժողովին ընթացքը կը կասէ ու կը կաշկանդէ : Երկրորդ, կողմնէն նաև գիտնալ թէ Երեսփոխաններն ուսմանք՝ որ հոս ներկայ ըլլալով ներկայութեան տուեալը չեն ստորագրած, և ունին գիրքերուն կարգը նստած են, Սահմանագրութեան ո՞ր յօդուածէն այդ իրաւունքը կ'առնուն : Կը խնդրեմ գիւանէն որ այս կէտերը բացատրէ :

արտօնութիւն մը Սահմանագրութեանն իրենց տուեալըստ իմ կարծեաց ասոնք ինքնին զրկեալ կ'համարուին իրենց Երեսփոխանական իրաւունքէն Սահմանագրութեան հակառակ գործելով : Իսկ թէ որ Սահմանագրութեանն արտօնութիւն առնելով այդպէս կը վարուին, ես կը տեսնեմ թէ այդ օրէնքը ազգակործան է, որ ժողովին ընթացքը կը կասէ ու կը կաշկանդէ :

Երկրորդ, կողմնէն նաև գիտնալ թէ Երեսփոխաններն ուսմանք՝ որ հոս ներկայ ըլլալով ներկայութեան տուեալը չեն ստորագրած, և ունին գիրքերուն կարգը նստած են, Սահմանագրութեան ո՞ր յօդուածէն այդ իրաւունքը կ'առնուն : Կը խնդրեմ գիւանէն որ այս կէտերը բացատրէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Միայն Տ. Մատթէոս վարդապետն է, որ ներկայութեան տուեալը ստորագրած չէ թէ և հոս ներկայ է. բայց ըսած է արդէն որ ետքը պիտի ստորագրէ :

ԻՓԷԿԵԱՆ Է. ԷՑ. — Ժողովրդին մէջ ալ կանգնող մի քանի Երեսփոխան կայ կրնան պէտք է իմանալ թէ որո՞նք են այդ Երեսփոխանները :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Մենք ինչպէս կրնանք փնտռել և իմանալ. այդ Երեսփոխաններն ով որ են՝ կրնան ճակատնին բաց գալ նստիլ իրենց տեղը :

ԻՌՅԻԿԱՆ Կ. ԷՑ. — Իմ առաջարկութեանս մասին համառօտ բացատրութիւն մը ունիմ ալ : Արքայան Պատրիարք չոր հրահրագրին մէջ միայն ժողովին գումարելու տեղը նշանակուած էր, իսկ դռնբաց կամ դռնփակ ըլլալու խօսք չկար . դարձեալ այս վերջին կէտն անորոշ թողուլ Դորին Արքայանութիւնը պէտք է հրահրէ առաջիկայ նիստը միայն գումարման տեղույն վրայ կանխաւ խորհրդակցելով դիւանին հետ. զի այս մասին ըսելը մը չունիմ : Սակայն դռնփակ ըլլալու որոշումը պէտք է ժողովին մէջ ըլլայ . արտաքոյ ժողովոյն չեմ ընդունիր . միանգամայն ժողովրդեան համար ճշմամ կամ պարբերութիւն կը բանեցնել խօսքը չեմ ընդունիր և կը բողոքեմ այս պատճառաբանութեան դէմ. իսկ ուրիշ օրինաւոր պատճառներով դռնփակ ըլլալուն չեմ հակառակիր :

Տ. ՂԵՒՈՆԴ ՎՐԴ. ՓԵՐՂԱԼԵԾԵԱՆ. — Որովհետև ժողովը Ղալաթիում կամ Մայր եկեղեցին գումարելու հարկին վրայ խօսքեր եղան, ես ալ այս կէտին վրայ գրուցելիք ունիմ: Ըսուեցաւ թէ ժողովը Ղալաթիում գումարելուն մէջ դժուարութիւն կայ, և այս ստույգ է. վասն զի թէ՛ Երեսփոխանութեան և թէ՛ ժողովրդին համար Ղալաթիւց եկեղեցին նեղ կուգայ. թէ՛ և կըսուի թէ Ղալաթիում կեղ-րոն տեղ մ'է և հոն ժողովը զիւրութիւն կայ, սակայն հիմա այդ զիւրութիւններն աւելի ևս Գումարաբուրի կողմ կան. Երամշայ կայ, երկաթուղի կայ, կրնայ ամենայն որ զիւրութեամբ դալ երթալ. մանաւանդ որ Մայր եկեղեցին ընդարձակ և մէջը վերնատուն ունենալով հագարաւոր ունեցողաց բազմութիւն հանգստութեամբ կը պարունակէ իր մէջ: Ասոնք նկատողութեան անելով կառաւարկեմ որ ընդհանուր ժողովոյ նիստը շարունակ Մայր եկեղեցին ըլլայ, ինչպէս կըլլար միշտ նախնի Պատրիարքաց օրով, զի ժողովները Ղալաթիում գումարելու սովորութիւնը գրեթէ իրիմեան Հայրիկի օրէն սկսած է:

Յաւ մ'ալ ունիմ որ պէտք է յայտնեմ. ազգային թերթ մը մտաբար բոլոր Երեսփոխանները իմացը անուանած էր. այդ թերթն երբ այսպէս համարձակ ազգին երեսփոխանները կը ծաղրէ իրմացը անուանելով, արդեօք ո'րչափ գէշ աղդեցութիւն պիտի չընէ դատաւայ մէջ. մտածեցէք թէ ասով ընդհանուր ժողովին արձեքն ու կարեւորութիւնը մինչև ո'ւր կ'իջնէ. պէտք է որ ժողովն եթէ իր արժանապատուութիւնը կը ճանչնայ հրատարակաւ հերքէ այդ նախատական դրուածքը: Գալով ՅԱ երեսփոխանաց դռնակի ստաճար-հութեանը, այս մասին կը ձայնակցիմ Մաղլըմեան էֆ. ի և կը կրկնեմ անոր առաջար-հութիւնը թէ գիւանն ու Ս. Պատրիարքը խորհրդակցելով պէտք եղածը տնօրինեն. քանզի ՅԱ երեսփոխանաց թէ՛ սրճարաններու մէջ և թէ՛ իսկընդ հանդիպումները նստած և ըրած որոշումին ապօրինաւոր է և անընդունելի: Սրազան Պատրիարքը գիւանին հետ բանակցելով թէ՛ դռնակի և թէ՛ դռնաց, երկուքին որն ալ ընել պէտք է ինչ իրենք որոշեցէ ետև ժողովը հրաւիրելու են իւր նիստը շարունակել. եթէ այսօր չեկողները նորին

չը գան, Յ անգամէն ետև ըստ օրէնի հրա-ժարեալ համարելու է զանոնք, և անվճարովի իրենց տեղը նոր ընարութեան համար հրա-հանդ գրուելու է պէտք ելած տեղերը:

ԵՌԽՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Այսօր ասեանը սկսելէն ՚ի վեր ժամ ու կէս եղաւ եւ ինձմէ առաջ խօսող բոլոր մեծարոյ պաշտօնակիցներս ժողովին այսօրուան վիճակին վրայ միայն խօսեցան. տարակոյս չկայ թէ մեծ խնդիր մ'է այս. եւ եթէ ուշադրութեամբ քննելու ըլլանք, պիտի տեսնենք թէ՛ այս առաջին անգամն է որ կը պատահի: Ըսել չեմ ուզեր թէ մեծագոյն մաս չգտնուելուն առաջին սնգամն է, այլ երեսփոխանական տագնապի մը առաջին անգամն է: Ներեցէք ինձ ըսել, Տեսաք իմ, թէ ձեր ըրած լուրջ դատողութիւնները թէ եւ կը պատուեմ, բայց կէտ մը կայ միայն, զոր ես չեմ կրնար ընդունիլ, այն է թէ ՅԱ երեսփոխանք պատակաւ հանելուն համար դատապարտելի են եւ ապագային դատակնիքն իրենց վրայ պիտի հրաւիրեն:

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. (ընդմիջելով) — Մենք ամենուն համար չեմք ըսեր, այլ միայն պատճառ եզոյններուն:

ԵՌԽՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. (չարունակելով) — Կաղաչեմ, մի ընդմիջէք զիս. այն առաջար-հութիւնն ստորագրող երեսփոխանք, որոց մեծ մասն անձամբ կը ճանչնանք, եւ որոց մէկ երկուքը ներկայ գտնուելով բացատրութիւն տր-ւին պահ մ'առաջ, եթէ ամենն ալ հոս դըտնուէին՝ միթէ նոյն յայտարարութիւնը չպիտի ընէին արդեօք, ինչ որ ըրին Քէրէստէճեան եւ Մարգարեան էֆէնտիները, որ անոնց հետ ըստորագրած ըլլալով հանդերձ այսօր ներկայ գտնուած են հոս: Նոյնպէս ստորագրողներէն մին, Տ. Մատթէոս վարդապետ հոս է, կըրնայի եւ զայն ՚ի վկայութիւն կոչել, բայց հարկ չեմ տեսնիր, վասն զի եթէ իւր կարծիքը հակառակ ըլլար իրեն հետ մի եւ նոյն հան-րագիրն ստորագրող պաշտօնակցացը առեւ բացատրութեան, անտարակոյս պիտի յայտնէր ժողովոյս: Քանի որ կը լուէ, ըսել կըլլայ թէ ան ալ համամիտ է առաջիններուն ըրած յայտարարութեանը: Ասկէց կրնամ նսեւ հետեւ-ցընել թէ, բացակայից ալ շատերուն կարծիքը

մի եւ նոյն է: Բայց ինչո՞ւ չեն եկեր: անա՛ հոս է խնդիրը, սակայն դժուար չէ մեկնել: Երբ հոս կուգանք ազատութեամբ կրնանք խօսիլ: Բոխանակ դուրսը խօսելու թող դային համար-ձակութեամբ հոս երես առ երես խօսէինք, ըսին սրատարժան պաշտօնակիցքս: Երաւ է որ ընդհանուր ժողովոյ վրայ գրեմն որ եւ իցէ կ-դանակաւ ազգեցութիւն մը բանեցնելու փորձը ցաւալի եւ միանգամայն դատապարտելի է, և թէ նոյն իսկ երեսփոխանք ալ ըլլան վորձող-ներն: Բայց այսպիսի դիպուածի մը յարակից եղող պարագաներն առանց նկատողութեան առնելու, առանց իրենց նպատակին բուն շար-ժառիթը լու մը քննելու, մեր պաշտօնակցաց չէ թէ մեծամասնութիւնը, այլ մէկ հասն անգամ չեմք կրնար դատապարտել առանց իրենց բացատրութիւնը լսելու: Միթէ կարելի՞ է մա-կարերել որ այդ հանրագիրն ստորագրելու դա-ճախարը զայն ստորագրող բոլոր երեսփոխա-նաց մարին մէջ, մի եւ նոյն վայրկեանն ծնունդ ունեցած ըլլայ: Տարակոյս չկայ թէ անոնց մէկը միայն կրնայ յղացած ըլլալ այս բանը եւ միւսներն ալ հետ զհետէ իրեն գաղափարին յարած, զանազան պատճառներով: Ես մը ազգասէր երեսփոխանք կը ճանչնամ, որք առանց նախընթաց նախին ներկայ գտնուելու, իրենց արուած տեղեկութեան վախնալով որ կուր մը չենէ ժողովին մէջ, ստորագրութիւն գրած են: Ես կը ցաւամ եղելութեան վրայ, բայց չեմ կրնար զիրենք դատապարտել իրեն պատակաւ երեսփոխանութեան:

ԻՓԷԿՃԵԱՆ ԷՖ. (ընդմիջելով) — Պատճառ եզոյնները դատապարտելի են:

ԵՌԽՈՒՅԵԱՆ ԷՖ. (չարունակելով) — Այլ համակարծիք եմ Մաղլըմեան էֆ. ի առաջար-հութեանը, զոր Տ. Ղեւոնդ վարդապետ, Իւ-թիւճեան և Կրճիկեան էֆէնտիներն ալ երկ-րորդեցին, այն է թողուլ գիւանին և Ս. Պատ-րիարքին, որ իրարու հետ խորհրդակցութեամբ պարտապաշտածք անօրինեն: Անոնց այսօր-ուան բացակայութեան երբէք չեմք կրնար հե-տեցնել թէ բնաւ ժողովի չպիտի գան մինչև որ իրենց առաջարկութիւնն ընդունուի: Բասն զի իրենց ստորագրած հանրագրութեանը մէջ, այս տեսակ իմաստ մը ամենեւին չի նշմարուի-անոնց մէջ շատերը կան, որ կարելի է թէ զը-

որնական ալ ըլլար, դարձեալ չպիտի գային: Եւ ո՞վ է ըսողը թէ հանրագիրն ստորագրող ե-րեսփոխանք միանամուս որոշած են ժողովի չը գալ: — Օրագիր. ո՞վ կրնայ հաստատել թէ Օ-րագիր, այդ երեսփոխանաց հանրութեան պաշ-տօնական բերանն է. արդէն այդպէս չըլլա-լուն ապացոյցն ունինք հոս, հանրագիրն ստո-րագրող երեք երեսփոխանաց ներկայութիւնը: Արդ՝ քանի որ այս ներկայ գտնուող երեսփո-խանք գործնական նիստ ուղուելուն դէմ չեն բո-ղոքեր, այլ միայն եղանակին եւ պատճառին, այսինքն՝ Ճողձը-րդին Յն-ճ Բանից-ոյ-ճ ըլ-լալուն իմաստին դէմ իրաւամբ կը բողոքեն: Բասն զի ժողովուրդը մինչև ցարդ որ եւ է ճնշուած մը բանեցուցած չէ մեր վրայ, եւ չը-կրնար ալ բանեցնել առանց Ահմադաղու-թիւնն իւր ախանջը մէջ խեղդելու, եւ ասոր ստուգութեանն ամենուս վկայութեանն աւելի զօրաւոր միջոց մը կայ, ինչպէս Ատենապետ էֆ. յիշեցուց, այն է առնանողութիւնը: Հե-տեւապէս նախընթաց նստի պատճառութիւնն ժո-ղովոյս արձանագրութեանց մէջ գրոշմուելէ եւ տեւ՝ եթէ առաջարկուի հանրագիրը բուն իւր բառական իմաստովը մեկնել, կրնայ հաստատ-ուիլ թէ գործնական նիստ ուղուելուն պատճառ-ով չէ թէ ժողովրդական ճնշումէ վախնալն է, այլ սողալին վարչութեան անդամոց հրամա-րականին առթիւ երեսան դալիք քննադատու-թիւններն զորնիակ նիստի մէջ կատարուիլն արդի պարագայից նկատմամբ պատշաճագոյն համարուիլն է: Բասն զի այնպիսի խնդիրներ կրնան յուզուիլ, որք մէկ նստի մէջ կարենա-լով վախճան գտնել, միայն այն նստին հանդի-սական եղող ժողովուրդը կրնայ ճշմարտու-թեան հակառակ գաղափար մը ստանալ, որք բարոյապէս կը վնասեն, թէ՛ ազգային վարչա-կան մարմնոյն եւ թէ՛ անոր անգամոց անճա-կան պատուոյն, որ մեր պատիւն ըսել է: Այս՝ Տեսաք իմ, թէ եւ ձայն բաղժաց՝ ձայն Աստու-ծոյ է, կըսուի, բայց յուզեալ պարագաներու մէջ կրնայ ըլլալ որ բազմութիւնը սխալ դա-տաստան մ'ընէ. ուստի մեր պաշտօնակիցները յուզեալ կուտակցութեանց սխալ դատաստա-նին տակ չձգելու համար գործնական նստի առաջարկութիւնը, ոչ միայն ՅԱ երեսփոխանի, այլ եթէ Յ երեսփոխանի կողմանէ ալ ներկա-յանայ, պէտք է ընդունիլ: Արդ՝ մէկ կէտ

մ'ալ կայ որ չեմ ուզեր առանց պատասխան-
ւոյ թողուլ : Արժանապատիւ պաշտօնակիցնե-
րէս մէկը բողոքեց թէ՛ լրագրապետ մը երես-
փոխանաց համար իր խոսքէ քննարկելու , եւ այդ նա-
խատանաց հատուցում մը պահանջեց : Ես կը-
սեմ որ Ընդհանուր ժողովն երբէք պէտք չէ
զիջանիլ այդ օրինակ նախատանաց հատուցում
պահանջելու , վասն զի ինքը շատ բարձր է
այդ ըսող մարդէն , եւ անոր նախատանքն եր-
բէք իրեն չեն կրնար հասնիլ : Թո՛ղ այդ օրի-
նակ հրատարակիչներն իրենք խոսին իրենց
ղրածէն , վասն զի ազգային որ եւ իցէ մէկ
պաշտօնական մարմնոյ մը արարքը քննադա-
տելու արտօնութիւնը իրենց իրաւունքն է ,
բայց նախատելու ո՛չ երբէք : Եւ երբ կրնեն ,
ինքզինքնին կը նախատեն . անոնց դատապար-
տութեան վճիռն իրենց գրածին մէջն է , եւ
յօդուածնին քանի որ մնայ , դատակնիքն ալ
'ի միտին կը մնայ անջինջ թէ՛ ներկայ եւ թէ՛
ապագայ սերնդեան առջև . վասն զի թշնա-
մաննն քննադատութիւն ըսիլ չըլլալուն ժո-
ղովուրդը համոզուած է այսօր : Եւ ցաւային
այն է որ շատ լրագրապետք , տակաւին չեն
հասկցած ժողովրդեան մտաւորական կարողու-
թեան աստիճանը : Ըսածիս ապացոյցը նոյն
խիւ ներկայ ժամանակիս մէջ , գանազան կու-
սակցութեանց ազգային խնդրոց վրայ ըրած
ազատ դատաստաններուն ժողովրդեան կողմա-
նէ դատած ընդունելութիւնն է : Այն ժամանա-
կին մէջ չեմք այսօր որ օրագրի մը գրածը իր-
բեւ ճշմարտութիւն կրնողունուէր . հիմա չնորհիւ
անոնց բազմութեանը , եւ նամանաւանդ չնոր-
հիւ Խորմեան Արքայանի ազատասիրութեանը ,
վասն զի անոր օրոյն է որ ազգային խնդիր-
ները կրցան այս աստիճան ազատութեամբ
քննադատուիլ , եւ արդիւնքն ալ տեսնուեցաւ :
Այո՛ , Տեարք իմ , ո՛վ ինչ կուղէ թող ըսէ .
ես ինքնս ականջալուր վկայ եմ այս մասին
Խորմեան Արքայանի դաղափորին . երբ Ազգա-
յին Ազարչութեան պաշտօնին մէջ կը դանուէի,
շատերն եկան բողոքելու Ազգային Ազարչու-
թեան եւ նոյն իսկ Պատրիարքին՝ իւր գործոցը
վրայ եղած ծայրայեղ քննադատութեան մասին
Պատրիարքարանի անտարբերութեանը դէմ :
բայց Նորին Արքայանութիւնը միշտ առաջինն
եղաւ դայս համոզելու թէ պէտք է տպագ-
րութեան ազատութեանը չը դալձիլ , վասն զի
նորա օգուտը մնասէն շատ աւելի մեծ է :

Արդ՝ այս օրուան նիստը բաւական արժա-
նաւոր բողոք մը համարինք այդ կարգի քննա-
դատներուն դէմ եւ բուն օրուան խնդիրն
եղրակացնենք . կը տեսնենք որ ժողովուրդը
բազմութեամբ կը դիմէ ի խորհրդարան երբ
Պատրիարքի հրատարակած խնդիր կայ , հետա-
քըրքեր է ամեն շայ տեղեկանալ թէ ինչ հե-
տեւանք կուենայ Պատրիարքի խնդիրը . Աար-
չութեան խնդրոյն գալով՝ կարծես թէ բոլորու-
վին անտարբեր է ապահով ըլլալով անտարա-
կոյս որ երեսփոխաններն ամենայն ազատու-
թեամբ խնդիրը պէտք եղածէն աւելի ծեծելով
կը լուծեն : Գտնալով եղած առաջարկութեան,
ես ալ կընդունիմ որ Գիւանին ու Ս . Պատրի-
արքին յանձնուի ըստ օրինի պէտք եղածը տը-
նօրինել խորհրդակցութեամբ , որպէս զի տա-
րածախութիւնը խափանին եւ երեւակայեալ
պառակտումը չ'իրականանայ ի մնաս Ազգին եւ
յամօթ երեսփոխանութեան :

ԻՓԷՔՃԵԱՆ 2 . ԷՖ . — Երեսփոխան էֆ .
ին ընդունածն ամենուս առաջարկութիւնն է .
մէկ կէտին մէջ միայն տարբերութիւն ունինք .
ըսուեցաւ որ զիւանը Արքայան Պատրիարքին
հետ խորհրդակցելով զանոնի ընել կամ չը-
նելն որոշեն իրենց մէջ , ժողովին գումարման
տեղին վրայ ընդդիմութիւն չունինք . բայց
զանոնի ընելու կամ չընելու կէտը կանխա-
որոշել չըլլար . ժողովին մէջ պէտք է որոշուի :
ՅԱ երեսփոխանք թող ելլեն հաստատեն ժո-
ղովրդեան ճշունձ բանեցուցած լինիլը , Գիւ-
անի թէ անոնց մէջ շատ անմեղներ կան .
բայց սկզբնապատճառ եղողները պառակտում
հանեցին ժողովին մէջ , եւ դատապարտելի են
այս գործին համար :

ԵՌՆՍՈՒՅԵԱՆ Տ . ԷՖ . — Տարբերութիւն-
նիս այս է . դուք կըսէք թէ ժողովը պառակ-
տեցին , բայց ես չեմ ըսեր թէ պառակտեցին ,
ես այսօրունէ չեմ կրնար դատել :

ԻՓԷՔՃԵԱՆ 2 . ԷՖ . — Արդէն Քէրէտտէ-
ճան եւ Մարգարեան էֆէնտիները բացարե-
ցին ինչ կերպով ըմբռնած ըլլալնին , չեն կար-
ծեր եղեր թէ դրսէ դուրս եղած առաջարկու-
թիւնն որոշում պիտի համարուի . մէկը միայն
մնաց որ իր կարծիքը չըր յայտնեց . փափաքելի
էր որ ան ալ յայտնէր :

ՄԷՐԵՏ—ԳՈՒՂԻ Յ . ԷՖ . — Երեսփո-
խան եւ իրէկճեան էֆէնտիներուն մէջ եղած
տարբերութիւնը մեծ բան մը չէ կարծեմ : Ի-
րէկճեան էֆ . կըսէ թէ ՅԱ երեսփոխանք զը-
ոչնիակ նիստ պահանջելով եւ այսօրուան
նիստին չհերկայանալով պառակտում հանեցին
ժողովին մէջ , եւ թէ ասոնց ընթացքը դա-
տապարտելի է . այսու ամենայնիւ անոնց մե-
ծագոյն մասն անմեղ են կըսէ եւ դատապար-
տութիւնը բուն իսկ զանոնք զրգողներուն եւ
խնդրոյն սկզբնապատճառ հեղինակներուն կը
վերադրէ : Երեսփոխան էֆ . ալ նմանապէս
չհաւատար որ ՅԱ երեսփոխանաց ամենքն ալ
միեւնոյն մտօք եւ նպատակաւ ստորագրած
ըլլան հանրագիրն եւ ժողովին չզալու առա-
ջագրութիւն ունենան . հետեւապէս չկարծեր
որ ժողովը պառակտուած լինի : Ասոնք ըստ իս
տեսութեան եղանակի տարբերութիւններ են
պարզապէս :

Արդ խնդիրն ամփոփելու համար կըսեմ
թէ օրն արդէն տարածանցաւ , եւ յուսալի
չէ որ այսուհետեւ ժողովոյ օրինական թիւը
լրանայ : Ցաւ է տեսնել որ այդ ՅԱ երեսփո-
խանաց մեծագոյն մասը , թեքեւս Օրմու՛րէ կար-
ծիքէն առաջնորդեալ , զանոնի նիստի համար
ժողովէն դուրս որոշում կը պահանջեն եւ ա-
ռաջագրած են չզալ այսօր մեծագոյն մաս չը
գոյացնելու եւ ժողովն անգործութեան դա-
տապարտելու համար : Իրենց այս գործին դա-
տապարտութիւնն իւր մէջն է , եւ անոր վրայ
չեմ խօսիր : Արքայան Պատրիարք Հայրն ու
զիւանը պարտաւոր են այս վիճակին վերջ
տալ , ինչպէս արդէն Պատուարժան Պաշտօնա-
կիցներս ալ այսպէս առաջարկեցին : Ատենա-
պետ էֆ . վերոյիշեալ հանրագիրը նկատողու-
թեան առեր է , իբր բազմաթիւ երեսփոխանաց
առաջարկութիւն՝ ի հարկէ մեր այս նստին մէջ
ըրած խօսքերն ալ նկատողութեան պիտի առ-
նուին իբր երեսփոխանաց կարծիք , եւ ըստ
այնմ անօրէնութիւն մը պիտի լինի յառաջիկայ
նստին համար : Աւստի կառաջարկեմ որ այդ
անօրէնութիւնն ընելէ յառաջ նկատողութեան
առնուի զանոնի նիստ կազմելու առաջարկու-
թեան ապօրինի եղանակը : նկատողութեան թո՛ղ
առնուի նաեւ նիստը զանոնի ուղղելու համար
ցուցում անխոհեմ պատճառն , որ ժողովրդեան
եւ ազգին պատիւը կը վիրաւորէ չարաչար :

Նկատողութեան թո՛ղ առնուի զանոնի նիստի
առաջարկութիւնն ստորագրողներէն այժմ հոս
ներկայ գտնուող մեր երկու Պատուարժան
պաշտօնակիցներուն յայտարարութիւնները ,
մանաւանդ այն խօսքը թէ՛ իրենց էրեսփոխան-
քը անհրաժեշտ ճշունձն ոչ նոսալ ճշունձ Բա-
նեցոյցին էրեսփոխանաց վրայ . նկատողութեան
թո՛ղ առնուի զանոնի նիստ ուղղող երեսփո-
խաններէն Իզմիրեան Տ . Մատթէոս վարդա-
պետին հոս ներկայութիւնն ու այսչափ դառն
բողոքանաց առջև պահած լուծութիւնը . նկա-
տողութեան թո՛ղ առնուի ժողովրդեան ճշուն-
մէն վստահալու պատճառանօք զանոնի նիստ
խնդրող երեսփոխաններէն ոմանց այժմ հոս
նոյն իսկ իրենց ամբաստանած ժողովրդեան
բազմութեան մէջ կենալու չեղանչիլը , ինչպէս
են ահաւասիկ Ծամկոչեան Պօղոս եւ Արասյ-
եան Մանուկ էֆէնտիները . նկատողութեան եւ
լաւ ուշադրութեան թո՛ղ առնուի այն մեծ եւ
սուղալի հարուածը՝ զոր այդ առաջարկութիւ-
նը ընող երեսփոխանք կուտան ազգին սահ-
մանադրականութեան , ժողովուրդն երեսփո-
խանութեան դէմ զրգուելով . ասոնց հետ նը-
կատողութեան թո՛ղ առնուի միանգամայն այս
նիստին ներկայ երեսփոխանաց թիւը , որք մի-
անաճուռ կը հերքեն եւ կը բողոքեն ժողովըր-
դեան ճշունձ ըսուած պատրուակին դէմ : թո՛ղ
յաւելուն այս թուոյն վրայ հիւանդ երեսփո-
խանաց թիւը , թո՛ղ յաւելուն ճամբորդ երես-
փոխանաց թիւը , թո՛ղ յաւելուն ստիպողական
գործոյ պատճառաւ բացակայ մնացող երեսփո-
խանաց թիւը եւ մանաւանդ թո՛ղ չը մոռնան
յաւելուլ նաեւ այն երեսփոխանաց թիւն ալ
որք այսօր նիստ չլինի Գոմա՛րի ըսելով տարա-
ճայնեալ սուտէն խարուելով չեն եկած : Եւ
այս ամենը նկատողութեան առնուելէ ետեւ
թո՛ղ Արքայան Պատրիարք Հայրն ու զիւանը
անօրինին ինչ որ արժան է այս պարագայիս
մէջ : Բաւական է որ ժողովրդեան ճշունձ ըսե-
լով հնարեալ անգոյ եւ սուտ պատճառաւ ժո-
ղովուրդը թշնամանելու չներեն : Մեք երեսփո-
խանք ժողովրդեան այդ մուրը ժուլրդեան
վրայ քսելու թոյլ չենք տար :

Տ . ՄԱՏԹԷՈՍ ՎՐԿ . ԻԶՄԻՐԼՋԱՆ . —
Խօսք կուղեմ :
ԲԱՆԻ ՄԸ ԶԱՅՆԵՐ . — Ներկայութեան

տուժարին մէջ թող ստորագրէ եւ ետքը խօս :

S. ՄԱՏԹԷՈՍ ՎՐԴ. — Գիտեմ, ստորագրելէ ետեւ պիտի խօսիմ : (Եւ զի անին մօտենալով ներկայութեան տուժարն ստորագրելէն ետեւ) Երեսօրօր սափական է քէնախներ . գիտէք որ երկու նիստ է տաղնապալից ժամանակ կանցնէ Երեսօրօրանական ժողովը : այս նիստերուն մէջ ինձ չը հարցուեցաւ թէ ինչո՞ւ լռութիւն կը պահեմ . այսօր միայն իմ լռութեանս պատճառը կը հարցուի . որովհետեւ դանիակ նիստ ուղող երեսօրօրանաց հետ ես ալ ստորագրած եմ : Կը յիշէք որ նախնեթաց երկու նիստերուն մէջ երկու անգամ ժողովը դային հանրագիր եկան կարդացուեցան : ժողովուրդը զիս ալ կամրաստանէր եւ կը պահանջէր որ աթոռ չունենամ Ա. դային ժողովոց մէջ : Առաջին անգամուն անմիջապէս Ատենապետ էֆ. ին զրով իմացուցի իմ բողոքելս . բայց նա պատասխան չտուաւ ինձ էւ միանգամայն երեսօրօրանական ժողովոյն մէջ յայտարարեց թէ միայն ի տեղեկութիւն երեսօրօրանաց կրնձեռնու հանրագիրը , եւ իմ բողոքս նկատողութեան չտուաւ : Եւ մինչդեռ Պատրիարքի հրաժարման խնդրը ներկայացաւ ժողովին , միթէ ես կարծիք եւ խօսք չունէի՞ այս մասին : Այո՛ ունէի , եւ թերեւս հակառակ խօսէի , բայց ինչո՞ւ չխօսեցայ . ահա պատճառը : Փանի որ ինձ դէմ եղած այն հանրագիրները դիւանին գրաւոր կերպիւ իմաց տալէս վերջն իսկ նկատողութեան չտանուեցաւ , ա'լ պարտաւորեցայ լռել . զի այլ եւս չէի կրնար ազատօրէն խօսիլ , եւ երբ խօսէի ու ազատօրէն իմ կարծիքս յայտնէի ցոյցեր պիտի լինէին ինձ դէմ , որով թէ իմ երեսօրօրանական իրաւունքս պիտի բռնաբարուէր եւ թէ ժողովն իւր ուղղութիւնը պիտի կորսնցնէր . ուստի եւ խոհեմութիւն համարելով լռեցի եւ նոյն նիստերուն մէջ ներկայացեալ խնդրոյն նկատմամբ իմ կարծիքս չտուի :

ՄԵՐԵԿԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — (Ընդմիջելով) Բայց աւասիկ ասոր հակառակ փորձը : Ի՞նչ էք դարձեալ որ կը խօսիք այսչափ բազմութեան առջեւ եւ կը տեսնէք որ ոչ ոք ցոյց մը կընէ Ձեզի դէմ :

S. ՄԱՏԹԷՈՍ ՎՐԴ. — (Շարունակելով)

Այս պատճառաւ ահա դանիակ նիստի առաջարկութիւնն ընող երեսօրօրանաց հետ ստորագրած եմ նոյն առաջարկը , որպէս զի ազատօրէն կարենամ ներկայ խնդրոյն վրայ ՚ իմ կարծիքս տալ իրրեւ երեսօրօրանս : Ես ալ ձեզ հետ կը դատապարտեմ երեսօրօրանութեան պատակաւորութիւնն ուղղութիւնը . իմ համոզումս այս է , ազատօրէն խօսիլ ժողովին մէջ . երբ այս ազատութեանս դէմ ցոյց մը լինի չպիտի կրնամ խօսիլ : — Ի վերջոյ կը պահանջեմ որ ինձի դէմ եկած ա'լապատանական հանրագիրները քննութեան ենթարկուին , եւ եթէ արդարեւ Պատրիարքին անձին դէմ եկի զեզուոյ դէմ եւ Ազգին դէմ յանցանք մը գործած եմ իմ պաշտօններուս մէջ , եւ երբ օրինակսն զնուրթեամբ վճառի իմ գատապարտութիւնս , պատրաստ եմ ամեն պատիւ կրելու մինչեւ եկեղեցական բարձր ատեաններու մէջ իսկ :

ՄԱԶԼԸՄԵԱՆ Յ. ԷՖ. — Իդէ՛ ետքը խօսողներն ալ մօտեցան իմ առաջարկութեանս եռուստիկեան էֆ. ըսաւ , չարնքնք դանիակ ըլլալու կամ չըլլալու կէտին վրայ , զի զըժուարութիւններ ունի իր մէջ . ես ալ կըսեմ . շատ լաւ կըլլայ որ այս կէտը դիւանին միջոցաւ Մերաշան Պատր'արքին յանձնուի եւ խրեմք խորհրդակցութեամբ պէտք եղածը տնօրինեն ու գործադրեն , առանց 'ի նկատի առնելու ՅԱ երեսօրօրանաց կողմէ մէջ բերուած պատճառը , որ ըստ ինքեան հնչին պատճառմ'է , եւ անկէ աւելի կարեւոր ու օրնական պատճառներ կրնան յառաջ բերուիլ :

ՀՈՎԵԱՆ ԵՎ ՓԱՓԱՋԵԱՆ Կ. ԷՖ. — (Ընդմիջելով) Ա՛յ . ժողովը պէտք է որոշէ զը որնո՞րակ նիստը :

ՄԱԶԼԸՄԵԱՆ Յ. ԷՖ. — (Շարունակելով) Առաջարկութեան մը օգտակարութիւնը անոր յառաջ բերելիք արդեանց օգտակարութեան կրնայ դատուիլ . անգամ մըն ալ նրկատողութեան առնելք , երբ կը պնդէք որ ժողովն որոշէ դանիակ նիստ ընելը , մտածենք որ 10 անգամ ալ նորէն նիստ ընենք չպիտի կրնանք այդ կէտը լուծել , որովհետեւ մեծամասնութիւն չպիտի ունենանք եւ առանց մեծամասնութեան որոշում չենք կրնար ընել :

ԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — (Ընդմիջելով)

Ձեկողներն երրորդ անգամն ետեւ հրամարեալ համարուին ըսի :

ՄԱԶԼԸՄԵԱՆ Յ. ԷՖ. — (Շարունակելով) Դիւանը եւ Սրբազան Պատրիարքը , երկու պաշտօնական մարմիններ , կրնան անաշտապէս պէտք եղածը տնօրինել եւ ժողովն անգործադրութեան վաճակէն ազատել : Ձեմ կարծեմ որ դարձեալ պնդէք այդ կէտին վերայ , եւ եթէ ձեր առաջարկութեան հետեւանքը լաւ կը յոյսի , պիտի համոզուիք թէ ո'րն է ամենէն աւելի օգտակարն ու գործնականը :

ՔԼԵՍԵՏԷՃԵԱՆ Պ. ԷՖ. — Կը ձայնակցիմ Մազլըմեան էֆ. ի առաջարկութեանը :

ԱՂԱՅԳՔԱՆ Մ. ԷՖ. — S. Մատթէոս վարդապետ ըսաւ թէ երկու անգամ հանրագիր ներկայացաւ ժողովին , որով ժողովուրդը զինքը կարտաքսէր Ազգային պաշտօններէն , ուստի եւ չհամարձակեցաւ խօսիլ , եւ այս պատճառաւ ինք ալ ժողովն նիստը դոց ըլլալն ուզած է ուրիշներու հետ : Երբ դրոշն հանրագրեր կուգան կը ներկայանան ընդհանուր ժողովն , միթէ ժողովը պարտաւոր է անմիջապէս դատաւոր լինիլ . ժողովուրդը հանրագրով կարծիք մը կը յայտնէ մի կ'ին կամ մ'լսին նկատմամբ , այդ երբէք արդէլք չը կրնար լինիլ ժողովականաց խօսելուն , քանի որ ժողովը դատաւոր չպիտի ըլլար , եւ Ազգային Սահմանադրութիւնն ալ որոշողական բան մը չունի այդ մասին . միթէ ժողովուրդային կարծիք մը կրնայ անմիջապէս տիրապետել ժողովին մէջ . ո՛չ երբէք : Պալով ժողովին դանիակ ընելու կամ չ'ընելու կէտը Սրբազան Պատրիարքին եւ Ատենապետ էֆ. ի տնօրէնութեանը յանձնելու խնդրոյն , իմ կարծիքս կը տարբերի այդ մասին . թէ որ Սահմանադրութիւնը ժողով մը դիւան է որ կրնայ իր մէջ պատակաւոր , եւ այս բանն ու շարժութեան չէ առեր եւ չխօսիր անոր վրայ , ինձի համար շատ պակասաւոր է այդ Սահմանադրութիւնը , հետեւապէս եւ սրբադրութեան մեծապէս կարօտս Այս նկատմունքներով կը պնդէի մինչեւ ցարդ եւ դարձեալ կը պնդեմ որ այս Սահմանադրութիւնը պէտք է ծայրէ 'ի ծայր սրբադրուի : Եթէ ՅԱ երեսօրօրանք ժողովն դուրս առաջարկութիւն կամ սրահանձնում ընելու հը-

րահանգը Սահմանադրութենէն տուած են՝ պէտք է ցոյց տան անոր ո'ր յողուածէն ոյժաւեւելով կընեն այդ պահանջումը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — 31 Երեսօրօրան ներկայ են , կերելի թէ ամենուն ալ կարծիքը հոս կը յանդի որ առաջարկուի Դիւանին եւ Սրբազան Պատրիարքին խորհրդակցիլ եւ միասնաբար տնօրէնութիւն մը ընել թէ առաջիկայ նիստն ե'րբ , ո'ւր եւ ինչ եղանակաւ պէտք է ընել :

ՔԱՆԻ ՄԸ ՋԱՅՆԵՐ. — Ա՛յ , տարբեր կարծիք յայտնող ալ կար :

ՄԱԶԼԸՄԵԱՆ Յ. ԷՖ. — Քուէի չպիտի կրնանք դնել որ որոշում մը դոյնայ : Ձեկող Երեսօրօրաններուն առաջարկութիւնը քանի որ օրինաւորութեան պայմաններէ զուրկ է չենք կրնար իրրեւ մեծազոյն մասին որոշումն ըմբռնել . մերն ալ իրրեւ վաղորդոյն մասին կարծիք եւ չէ թէ իրրեւ որոշում պիտի յանձնենք Սրբազան Պատրիարքին եւ Դիւանին խոհեմութեանը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդրոյ մը վրայ խօսելէ վիճարանելէ ետեւ որոշում մը պէտք է , հոս դժուարեղները պիտի որոշեն սա՛ կամ նա՛ առաջարկութիւնը հաղորդել Սրբազան Պատրիարքին եւ Դիւանին տնօրէնութեանը . ինչպէս դրսիններն որոշում մը ըրեր են՞ , որ օրինաւոր որոշում չէ , կարծիք կամ առաջարկութիւն է կըսէք , շատ լաւ . հիմա մեր մէջն ալ երկու կարծիք երեսան ելած է . մէկն է յանձնել Սրբազան Պատրիարքին եւ Դիւանին տնօրէնութեանը յառաջիկայ նիստն ո'ւր եւ ինչպէս դուարեւու համար . իսկ միւսն է դառնփակ նիստ ընելու կէտը ժողովով որոշել . ուրեմն առանց քուէի դնելու ինչպէս կընանք այս երկու կարծիքէն մէկն ընտրել :

ԷԱՏ ՄԸ ՋԱՅՆԵՐ. — Քուէի չէրուիր : Որոշում ընելու վիճակին մէջ չենք :

S. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԷՆՅ. ՄԿՐԵԱՆ. — Ինչո՞ւ կըսէք քուէի չէրուիր . մեք ալ մեր առաջարկութիւնները քուէի դնենք , որպէս զի դիւանն իրրեւ մեր որոշումը ներկայացնէ Սրբազան Պատրիարքին :

ՄԱՋԱԼՄԵԱՆ Յ. ԷՖ. — Մեծ մասս մը կայ դուրսը, որ թէև ապօրինաւոր առաջարկութիւն մ'է ըրածը և որոշում չկրնար համարուիլ, սակայն իր մէջ համաձայնած է որ մինչև դռնփակ նիստ չըլլայ, չներկայանան: Ինչպէս անոնց ըրածն ապօրինաւոր է, մերն ալ ապօրինաւոր կըլլայ եթէ քուէի դեմք ու որոշում ընենք. անոնք գոնէ մեծագոյն մասունին, մեք ան ալ չունինք: Ուստի առանց քուէի դեմք մեր կարծիքն իրը միաձայն առաջարկութիւն պէտք է դիւանին միջոցաւ հաղորդենք Սրբազան Պատրիարքին:

ԻԻԹԻՒՃԵԱՆ Կ. ԷՖ. — Կարծեաց և որոշման տարբերութեան վրայ պիտի խօսիմ: Ստոյգ է որ ներկայ ժողովը մեծամասնութենէ զուրկ ըլլալով չկրնար որոշում ընել. այսինքն Երեսփոխանական ժողովոյ որոշում ըսելով ինչ որ կը հասկըցուի, այն չկրնար ընել: Բայց ներկայ գտնուողներուն մեծագոյն մասին կարծիքն ինչ ըլլալը հասկընալու համար քուէարկութիւն կրնայ ըլլալ, որպէս զի դիւանը նոյն կարծիքը յանուն ժողովոյ կարող կըլլայ ներկայացնել ուր որ անկէ: Մեր խօսքերը կարծանագրուին. հոս և արձանագրութիւնն ալ պիտի հրատարակուի, յորմէ պիտի հասկընայ ամեն ոք թէ ինչ խօսքեր եղեր են և ինչ կարծիք գոյացեր է. ամենուն ալ կարծիքը յայտնուեցաւ թէ դռնփակ նիստ ըլլալու դէմ ոչ ոք հակառակութիւն ունի, երբ օրինաւոր պատճառաւ մը դռնփակ նիստ ընել տնօրինուի. տարբերութիւնը միայն սա՛ կէտին մէջ գոյացաւ որ ոմանք ժողովին մէջ որոշուի ըսին. կարծիքները միացնելու համար կըսեմ որ դիւանին և Սրբազան Պատրիարքին յանձնուի

տնօրինել ինչ որ օրինաւոր և օգտակար կը համարին:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ Թ. ԷՖ. — 66 թղ նիստն է ժողովոյն, այսքան նիստերու մէջ միայն Աղթամարայ կաթողիկոսական խնդրոյն համար դռնփակ նիստ ընել որոշուեցաւ. ժողովին կը մնար այս անգամ ալ դռնփակի որոշումն ընել, եթէ որոշում ընելու ձեռնհաս վիճակին մէջ գտնուէր: Սակայն այսօրուան վիճակնիս տարբեր է, ուստի քանի որ որոշում չենք կըրնար ընել, պէտք է որ մեր կարծիքը միայն հաղորդենք Սրբազան Պատրիարքին, որ ինք դիւանին հետ խորհրդակցելով առաջիկայ նիստը գումարելու մասին պարտաւ պատշաճ տնօրինէ և ՚ի գործ դնէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն ներկայ 31 Երեսփոխանք կը համաձայնին որ Սրբազան Պատրիարքը դիւանին հետ խորհրդակցութեամբ՝ առաջիկայ նիստն ո՛ւր, ե՞րբ և ի՞նչ եղանակաւ գումարելու համար պէտք եղած օրինաւոր անօրէնութիւնն ընէ:

Ներկայ ժողովականք Ատենապետ էֆ. ի վերջին յայտարարութեան համաձայն Ատենադպիր էֆ. ին կը յաճենն այսօրուան նիստին արդիւնքը հաղորդել Ս. Պատրիարքին ՚ի պարտաւ պատշաճ գործադրութիւն:

Ատենը կը գոցուի ժամ 10 ին:
 Առժամանակեայ
Շարենադպիր **Շարենադէպ**
 ՏԻԳՐԱՆ ԵՈՒՍՈՒՅԵԱՆ ՌՈՒՍԻՆԵԱՆ



ԳԻՆ 2 ՂՈՒՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒՓԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՆՏՈՒԿԻՆ

Կը ծախուի ՚ի Գիւ. անատան Պատրիարքարանի, և կը գանուի
ամեն գրախաճառաց քով և Եկեղեցեաց բանկալները :